Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

8316

126

329.15

ՎՈՒՍԿԱՉՄԱԿԵՐՊՉԻ ՀՈՒՇԱՏԵՏՐԸ

1334

4-97

ՋԵՐՆԵՇՐ—ԲԱԳՈՒ— 1931

ЗКПЗ
4-97

Տպագրված է
„ԱԶԵՐՆԵՇՐ“
տպարանում
Բաքու, Բ.-Մոսկ.
և Կրասնո-Գրեսնեն.
փողոց. անկյուն

Գլավլ. 3451 Գաղվեր 456 Տիրաժ 1000 Սա.Ֆ. Ե7

էր բրիգադայի կամ հ

24 SEP 2006

ԿՈՒՍԿԱԶՄԱԿԵՐՊՉԻ ՀՈՒՇԱՏԵՏՐԸ

Կուսակցական խմբակը, վորը միացնում է բրիգադայի, հերթակալության, բաժնի, հանքահորի և այլն կուսակցության անդամներին և թեկնածուներին, հանդիսանում է կուսակցական կազմակերպության սկզբնական ստորին ողակը: 5-ամյակի 3-րդ — վճռական տարում սոցիալիստական հարձակման ծավալման և սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցման հսկայական խնդիրները պահանջում են լարել կուսակցության ու բանվոր դասակարգի բոլոր ուժերն այդ խնդիրները կատարելու և կազմակերպության ամեն մի ողակի ու ամեն մի առանձին կոմունիստի բոլշևիկյան մարտունակությունն ուժեղացնելու համար:

29 05 2013

ԿՈՒՍԿԱԶՄԱԿԵՐՊՉԻ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

8316

1. Կուսկազմակերպչի գլխավոր անելիքը կայանում է նրանում, վոր ամրապնդի իր խմբակի քաղաքական մարտունակությունը և բոլշևիկյան համախմբվածությունը։ Կուսակցական կազմակերպիչն, ամենից առաջ, հանդիսանում է իր խմբակի բոլոր կուսակցականների ղեկավարն ու կազմակերպիչն այն պայքարում, վոր մղվում է գործնականում կուսակցության հիմնական գիծն անցկացնելու համար և այն պայքարում, վոր մղվում է աջ օպորտունիզմի՝ վորպես սոցիալիստական շինարարության տվյալ ետապում գլխավոր վտանգի և ամեն տեսակի «ձախ» տատանումների յերևույթների դեմ, նույնպես և դեպի ամեն տեսակի թեքումները ցույց տրվող հաշտվողականության դեմ։

2. Կուսկազմակերպչի հիմնական անելիքը կայանում է նրանում, վոր իրագործի կուսակցական ղեկավարությունը՝

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
43184-63

իր բրիգադայի կամ հանքահորի ամբողջ արտադրական կյանքի, արդֆինպլանի կատարման և գերակատարման համար նրա մղած պայքարի վերաբերմամբ։ Չխառնվելով բրիգադիրի, ավագ բանվորի, հորափոր վարպետի և այլոց աշխատանքի վերաբերմամբ ունեցած տեխնիկական ու գործառնական ղեկավարությանը և ամեն կերպ նպաստելով միավարության ամրապնդմանը՝ կուսկազմակերպիչը բրիգադիրի ու բրիգադայի պրոֆկազմակերպչի հետ միասին յեռանկյունի (տրեուգոլնիկ) է կազմում. այդ յեռանկյունին պետք է ղեկավարի՝ արտադրական ծրագրի գործառնական առաջադրությունների, աշխատանքի արտադրողականության բարձրացման և աշխատանքային դիսցիպլինայի ամրապնդման իրականացումը, պայքար մղի արտադրարքի կամ նորոգման վորակի լավացման ու ինքնարժեքի իջեցման համար։

3. Կուսկազմակերպչի հատուկ անելիքն է հանդիսանում բոլոր կուսակ-

ցականներին, կոմյերիտականներին ամբողջովին մասնակից անել սոցմրցմանն ու հարվածայնությանը։ Կուսակցության Կենտրոնական Կոմիտեն իր հատուկ վորոշման մեջ մատնանշել է, վոր այժմ վոչ հարվածային կոմունիստ լինել չի կարող։ Ուստի, կուսակազմակերպիչը պիտի ստուգի, թե ՎԵԿԱՊԵ-ի (բ) Կենտկոմի այդ վորոշումն ինչպես է իրականացվում, թե բոլոր կոմունիստներն իրոք վորքան են վոչ միայն հարվածային, այլև անկուսակցական մասսաների մեջ հարվածային շարժման կազմակերպիչներ։ Կուսակցական կազմակերպիչը պետք է լայնորեն կազմակերպի սոցիալիստական մրցության գործադրությունը առանձին բրիգադաների ու բանվորների խմբակների միջև, սոցմրցման գրավելով բոլոր բանվորներին և իր բրիգադան որինակելի դարձնելով ձեռնարկում։

4. Կուսակազմակերպչի ամենաառաջին անելիքն է բանվորներին կուսակցության մեջ գրավելը։ Դրա համար

կուսակազմակերպիչը պետք է մանրամասն ուսումնասիրի անկուսակցական ակտիվը, ամրացնի առանձին կոմունիստներին հարվածային բանվորներին և նրանց հետ անհատապես (ամեն մի բանվորի հետ առանձին) աշխատանք տանի կուսակցության մեջ քաշելու համար։ Կուսակազմակերպիչները հատուկ աշխատանք պետք է տանեն թուրք բանվորների հետ, լայնորեն նրանց գրավեն գործնական և ամենորյա աշխատանքի և ապա կուսակցության մեջ քաշեն հարվածային—ակտիվիստ առաջավոր թուրք բանվորներին։

Կուսակազմակերպչի կարևորագույն պարտականությունն է աշխատանք տանել թեկնածուների մեջ։ Նա պիտի ապահովի թեկնածուների գրավումը գործնական աշխատանքի և ուսմունքի, նրանց հետ զրուցի անտեսական ու քաղաքական հարցերի մասին, վերահսկողություն ունենա, թե նրանք ինչպես են հաճախում քաղմբակները, հետևի, վոր թեկնածուները ժամանա-

կին կուսակցության անդամ դարձվեն և այլն։

5. Կուսկազմակերպչի անելիքն է հանդիսանում կուսակցականներին ու անկուսակցականներին դրավել թե քաղաքական և թե տեխնիկական դպրոցները, խմբակները, դասընթացները և այլն, անպայման ապահովելով, որ բոլոր բանվորներն ամեն տեսակի ուսմունքով ընդգրկվեն։ Կուսակցական կազմակերպիչը պատասխանատու է իր կուսխմբակի քաղուսմունքի դրության և բոլոր բանվորների կողմից տեխնիկային տիրապետելու համար։ Կուսկազմակերպիչը հատուկ աշխատանք պետք է տանի բանվորական մասսաների մեջ տեխնիկան արմատացնելու համար, պետք է կազմակերպի տեխնիկական խմբակներ, դասախոսություններ, զբաղմունքներ և այլն, պիտի չը մոռանա, որ շինարարության ավյալ ետապում տեխնիկան «վճռում է ամեն ինչ» և որ «բոլշևիկները պիտի տիրապետեն տեխնիկային», ինչպես ասել է կուսակցության առաջնորդ ընկ. Ստալինը։

6. Կուսկազմակերպիչն իր խմբակում պիտի կուսակցական պարտականությունները ճիշտ և հավասարապես բաժանի բոլոր կոմունիստների միջև, այնպես որ կուսակցության ոչ մի անդամը չմնա առանց բեռնավորման (գլխավոր բեռնավորումը պիտի համարվի արտադրական բեռնավորումը, սոցմրցման և հարվածայնության հաշվառը, արտադրանքի որակը, ինքնարժեքի իջեցումը, պայքարը բրակի, պրոգուլների դեմ, ռացիոնալացման առաջարկները հավաքելը և այլն)։

7. Կուսկազմակերպիչն իր ամենօրյա աշխատանքում ղեկավարում է խմբակում կոմյերիամիության գործունեությունը (կոմյերիտական խմբակային կազմակերպչի միջոցով) և կանանց աշխատանքը (պատվիրակուհիների ու կանանց մեջ աշխատանք տանելու համար ընտրվածների միջոցով)։

8. Կուսկազմակերպիչը պետք է լինի մասսայական ագիտացիայի ղեկավարն ու կազմակերպիչն ամբողջ խմբակում։ Նա պիտի ապահովի թերթերի տարածումը բրիգադայում, կազմակերպի թերթերի ընթերցումը ճաշի դադարներին, բացատրություններ տա բանվորներին՝ նրանց հետաքրքրող բոլոր քաղաքական և արտադրական հարցերի մասին, պետք է այնպես անի, որ բոլոր կուսակցականները թե ամենոր և թե կարևորագույն կամպանիաների մասին ագիտացիա տանեն անկուսակցական բանվորների մեջ։ Այդ մասսայական ագիտացիան տանելու համար կուսկազմակերպչին որպես ոգնական պիտի ջոկվի խմբակային հատուկ ագիտատոր։ Ճաշի դադարներին բանվորների մեջ քաղաքական զեկուցումներ ու զրույցներ տանելու համար կուսկազմակերպիչը կարող է իր խմբակը հրավիրել որակյալ զեկուցողներ՝ ԲՀՄից կամ ռայկոմից։

9. Իր ամբողջ աշխատանքում կուսկազմակերպիչը տանում է և գործնականում պիտի իրագործի լենինյան ազգային քաղաքականությունը, ինտերնացիոնալ աշխատանք տանի բանվորների մեջ, վճռական հակահարված տալով միապետական շովինիզմին, որ գլխավոր վտանգն է կուսակցության ազգային քաղաքականության համար, միաժամանակ պայքարելով նաև տեղական նացիոնալիզմի յերևույթների դեմ, որն ինտերվենտներին է ձեռնտու։ Թուրք և ազգային փոքրամասնությունների բանվորների մեջ կուսկազմակերպիչը պետք է ամբողջ մասսայական աշխատանքը, զեկուցումները, զրույցները, թերթերի ընթերցումը, դպրոցները, խմբակները և այլն տանի նրանց մայրենի լեզվով։

Կուսկազմակերպիչը պետք է կազմակերպի Ադրբեջանի գյուղին ոգնելու աշխատանքը՝ գյուղական տնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում։

ԿՈՒՍԿԱԶՄԱԿԵՐՊՉԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Աշխատանքների ընդհանուր-բջջային պլանի հիման վրա կուսկազմակերպիչը կազմում է իր պլանը, բաժանում է աշխատանքը իր խմբակի անդամների միջև և իրագործում է այդ պլանը իր բրիգադայում, ցեխում կամ հանքահորում։ Կուսխմբակի աշխատանքի պլանը պիտի լինի կոնկրետ ու գործառնական՝ բրիգադայի արտադրական խնդիրների և գործնական մասսայական աշխատանքի հիման վրա։

2. Կուսկազմակերպիչը պիտի ներկա լինի ցեխբջջի և կոլեկտիվի նիստերին, բյուրոյում ժամանակին դնի այն հարցերը, որ ծագում են խմբակում ու անցկացնի իր հարցերը բջջի, գործարկոմի, տնտեսավարի և այլն միջոցով։ Ամսական յերկու անդամից վոչ պակաս կուսկազմակերպիչը պիտի խմբակի ժողով հրավիրի՝ քննելու արտադրական, պրոֆմիութենական, խորհրդային և այլ

կարգի հարցերը, որ վերաբերում են տվյալ խմբակին, բրիգադային։

3. Կուսկազմակերպիչը պարտավոր է խմբակի բոլոր անդամներին տեղեկացնել վերադաս կուսակցական որգանների բոլոր դիրեկտիվների մասին և ապահովի կուսակցության ու կառավարության առանձին կարևորագույն վորոշումների մշակումը։ Կուսկազմակերպիչը վերահսկում է, թե կուսակցության անդամներն ինչպես են կատարում իրենց վրա դրված բեռնավորումները, հետևում է կուսդիսցիպլինայի ամրապնդմանը, անդամավճարների վճարմանը և այլն։

4. Կուսխմբակում արձանագրություններ տանելը պարտադիր չէ, բայց խմբակի և առանձին կոմունիստների աշխատանքի ու նրանց տրված առաջադրությունների հաշվեառը պիտի տանի կուսկազմակերպիչը հուշատետրում կամ թե յուրաքանչյուր կուսակցական խմբակի ընդհանուր աշխատանքի առանձին որագրերում։

5. Կուսկազմակերպիչը սիստեմատիկորեն ուսումնասիրում է իր խմբակի կազմը, օգնում է բջջին թեկնածուներ ջոկելու՝ ամենից ընդունակ բանվորներին առաջ քաշելու տնտեսական և պրոֆմիութենական աշխատանքի։ Կուսխմբակն իր կողմից կարող է թեկնածուներ առաջարկել՝ հասարակական աշխատանքի առաջ քաշելու համար։

6. Կուսկազմակերպիչն առանձին ուշադրություն պիտի դարձնի տեղական ազգությունների մեջ աշխատանքը դընելուն և նրանցից դարձնելով սոցիալիստական տնտեսության կազմակերպիչներ և ակտիվ կառուցողներ։

7. Կուսակցական կազմակերպիչը պետք է հիշի, որ ինքը հանդիսանում է կուսակցական ղեկավարության առաջավոր ֆորպոստը և այն օղակը, որն անմիջապես կյանքի մեջ է մտցնում և իրագործում կուսակցության հիմնական գիծը։

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
[redacted]
ՀԱՍՌ ССР
им. А. Мясникяна

180

С/А 39

БИБЛИОТЕКА
ИН ИУ
ПОСТОКОВЕДНЫХ
Академии Наук
СССР

ЗКПЗ
4-97